ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորները նախապես վճարել են հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում բացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի, «Ծին նախագիծ» ՍՊԸ–ի հայցն ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի, երրորդ անձինք՝ «Տեկտոնիկա» ՍՊԸ–ի, «Արամե» ՍՊԸ–ի՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 1.3 կետում լրացում կատարելուն, կոնսորցիումի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու, թիվ 5 արձանագրության 3–րդ կետի 3.2–րդ ենթակետով և 4–րդ կետով կայացված որոշումներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

պարտավորեցնել «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի գնահատող հանձնաժողովին թիվ ՀՏՁՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և 21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետում կատարել լրացում՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Մ-Բիլդ» ՍՊԸ-ի և Անդրանիկ Վլադիմիր Սիմոնյանի միջև աշխատանքային պայմանագիրը կնքվել է 06.02.2017թ, սակայն «Մ-Բիլդ» ՍՊԸ-ն գրանցվել է 15.06.2017թ. պայմանագրում նշվել է Անդրանիկ Սիմոնյանի 04.05.2018թ. տրված թիվ «AR 00671919» համարով անձնագիրը:

անվավեր ճանաչել թիվ ՀՏՁՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և

21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով կայացված որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել նաև նույն արձանագրության 5.2 կետով կայացված որոշումը:

անվավեր ճանաչել թիվ ՀՏՁՀՎՁԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և 21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել նաև նույն արձանագրության 5.1 կետով կայացված որոշումը:

Հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am